ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 351 Ա/Ք                                                    11 «05» 2010թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի N 654-Ա/Ք ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. սեպտեմբերի 12-ի <<Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրությունը, նախարարության աշխատակազմի կառուցվածքը, նախարարության աշխատակազմին հանձնվող գույքի կազմը և չափը հաստատելու մասին>> N 1579-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 31-րդ կետը և <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածը

**Հրամայում եմ `**

1. Հաստատել ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2009 թվականի հուլիսի 24-ի <<ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության կանոնադրությունը հաստատելու մասին>> N 654-Ա/Ք հրամանը:

Ա.Աշոտյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 580 - Ա/Ք «15» 06 2010

## ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 11.05.2010Թ. N 351-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 10.06.2010թ. N 557- Ա/Ք հրամանը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010թ.-ի մայիսի 11-ի <<Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության կանոնադրությունը հաստատելու և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2009թ. հուլիսի 24-ի N 654-Ա/Ք հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 351-Ա/Ք հրամանի 1-ին կետի հավելվածով հաստատված <<Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության>> կանոնադրության 6-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 4-րդ ենթակետում <<մշակման>> բառից հետո լրացնել <<և դրանց իրականացման կազմակերպման>> բառերով,
2) 5-րդ ենթակետը հանել,

3) 10-րդ ենթակետում <<մշակման և հաստատման>> բառերը փոխարինել <<մշակում և հաստատում>>, իսկ <<սահմանման մասնակցություն>> բառը՝ <<սահմանում>> բառով,

4) 12-րդ ենթակետում <<մշակում>> բառից հետո լրացնել <<և հաստատում>> բառերով,

5) 15-րդ ենթակետը հանել,

6) 21-րդ ենթակետում <<համակարգման մասնակցություն>> բառերը փոխարինել <<համակարգում>> բառով,

7) 22-րդ ենթակետում <<համակարգման վերաբերյալ եզրակացությունների և առաջարկությունների ներկայացում>> բառերը փոխարինել <<համակարգում>> բառով,

8) 31-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 32)-րդ, 33)-րդ և 34)-րդ կետերով՝

<<32) պետական կառավարման լիազոր մարմնի հետ համագործակցությամբ սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ցույց տրվելիք օգնության, սփյուռքում հայապահպան կրթական գործունեության, Հայաստանի Հանրապետությունում կրթական գործունեությանը սփյուռքի մասնակցության ծրագրերի մշակման և մոնիթորինգի իրականացման աշխատանքների մասնակցություն>>,

<<33) նախարարության տեղեկատվական քաղաքականության և հասարակայնության հետ կապերի կազմակերպման և իրականացման մասնակցություն>>,

<<34) բարձրագույն, հետբուհական, միջին և նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթության, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատությունների շրջանավարտների ավարտական փաստաթղթերի պատվիրման, լրացման, հաշվառման և պահպանման կարգերի հաստատման աշխատանքներին մասնակցություն>>:

Ա.ԱՇՈՏՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
կրթության և գիտության նախարարի
2010թ. մայիսի 11-ի N 351 Ա/Ք հրամանի

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) ՀՀ կրթության և գիտության նախարարության ստորաբաժանում է, որը մշակում է բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառում ՀՀ կառավարության քաղաքականությունը, ապահովում է դրա ներդրումը և իրականացման վերահսկողությունը:
2. Վարչության գործառույթները սահմանվում են ՀՀ կրթության և գիտության նախարարության և սույն կանոնադրությամբ:
3. Վարչությունն իր գործունեությունը իրականացնում է ՀՀ օրենսդրությանն ու այլ իրավական ակտերին համապատասխան:
4. Վարչությունը կազմված է վարչության պետից, վարչության պետի տեղակալից, բաժնի պետերից և աշխատակիցներից:
5. Վարչության նպատակներն ու խնդիրներն են՝

   1) հայ ժողովրդի հզոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանը և զարգացմանը միտված, բարձրագույն մասնագիտական կրթության համակարգի բնականոն գործունեության ապահովումը,

   2) բարձրագույն կրթության բնագավառի զարգացման ապահովումը, որպես տնտեսության զարգացման, երկրի անվտանգության ապահովման, կրթության, մշակույթի և հասարակական առաջընթացի բացառիկ կարևոր գործոն,

   3) .բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բարեփոխումների իրականացումը:

### II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչությունը իր նպատակների ու խնդիրների իրագործման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործառույթները՝

   1) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերի մշակման մասնակցություն,

   2) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառի Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության մշակման մասնակցություն,

   3) բարձրագույն և հետբուհական կրթության զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերի մշակման, դրանց մոնիթորինգի և գնահատման մասնակցություն,

   4) բարձրագույն և հետբուհական կրթության բնագավառում միջպետական համագործակցության ծրագրերի մշակման մասնակցություն,

   5) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության բնագավառին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակմանն ու քննարկմանը սահմանված կարգով մասնակցություն,

   6) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությանն առնչվող օրենսդրական, ենթաօրենսդրական ակտերի կատարման գործընթացի համակարգում,

   7) ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների ներկայացրած հայտերի հիման վրա՝ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների (կազմակերպությունների) հետ համատեղ իրականացնում է ըստ ուսումնական հաստատությունների (կազմակերպությունների), բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթությամբ մասնագետների պատրաստման պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (վճարովի), ինչպես նաև՝ ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի (անվճար), տեղերի և մասնագիտությունների ձևավորում ու բաշխում,

   8) իր լիազորությունների սահմաններում, սահմանված կարգով, կազմակերպում է Հայաստանի Հանրապետության բուհերի ընդունելության գործընթացը՝ ըստ համապատասխան ուսուցման ձևերի և կրթական ծրագրերի,

   9) ուսումնասիրում և տալիս է եզրակացություն բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի՝ պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան կազմակերպման, մոդուլային սկզբունքով և կրեդիտային հենքով արտահայտված ուսումնական պլաններով, առարկայական ծրագրերով և ուսումնական ձեռնարկներով ապահովվածության վերաբերյալ,

   10) ըստ կրթական ծրագրերի և կրթության ձևերի՝ լաբորատորիաների, արհեստանոցների, մարզադահլիճի, համակարգչային դասարանի (լսարան) նյութատեխնիկական հագեցվածության չափաքանակների, ուսումնադիդակտիկ հագեցվածության, գեղարվեստական, տեղեկատվական և այլ գրականության չափաքանակների մշակման և հաստատման, ինչպես նաև՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավար և

պրոֆեսորադասախոսական անձնակազմին ներկայացվող պահանջների սահմանման, մասնակցություն,

11) բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության կազմակերպման դրսեկության (էքստեռնատի) և հեռավար (դիստանցիոն) ձևերով, ինչպես նաև՝ հեռակա ուսուցման, մագիստրատուրայի ուսուցման, երկրորդ մասնագիտություն ստանալու, ակադեմիական արձակուրդ տալու և ամփոփիչ ատեստավորման կարգերի մշակում և սահմանում,

12) օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում միջպետական համաձայնագրերով սահմանված կրթաթոշակային տեղերի մրցույթի անցկացման կարգի մշակում,

13) ապահովում է օտարերկրյա քաղաքացիների Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելությունը և կացության կարգավիճակի տրամադրումը, մասնակցում է այդ քաղաքացիների Հայաստանի Հանրապետությունում ուսանելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փորձաքննության կազմակերպման և հաշվառման աշխատանքներին,

14) կազմակերպում և իրականացնում է Հայաստանի Հանրապետությանը տրամադրվող օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատություններում միջպետական համաձայնագրերով սահմանված կրթաթոշակային տեղերի մրցույթները, արտերկրում սովորող ՀՀ քաղաքացիների ուսման և կեցության ապահովումը,

15) իր իրավասության սահմաններում լիցենզավորման գործընթացների կազմակերպման և լիցենզավորված սուբյեկտների կողմից տվյալ գործունեությունն իրականացնելու համար պարտադիր պահանջների և պայմանների պահպանման ուսումնասիրությունների և դրանց նկատմամբ հսկողության, ինչպես նաև՝ կրթական ծրագրերի իրականացման լիցենզիա ստանալու մասին հայտի հիման վրա հայտատուի կողմից ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը պարզելու նպատակով տեղում ուսումնասիրությունների իրականացման մասնակցություն՝ ըստ անհրաժեշտության,

16) ՀՀ նախարարությունների, պետական կառավարման այլ մարմինների, պետական կառավարչական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ ուսումնադաստիարակչական բնույթի միջոցառումների, բարձրագույն և հետբուհական կրթության հարցերով համաժողովների, խորհրդակցությունների և այլ միջոցառումների կազմակերպում՝ ըստ անհրաժեշտության,

17) բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության համակարգում,

18) բարձրագույն և հետբուհական կրթության զարգացման պետական ծրագրի մշակման և դրա իրականացման աշխատանքների համակարգման մասնակցություն,

19) պետական կրթական չափորոշիչների մշակման գործընթացի և դրանց իրականացման աշխատանքների համակարգում,

20) պետական ռազմավարական ծրագրերի շրջանակներում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության ոլորտի ծրագրերի իրականացման կազմակերպման և մոնիթորինգի մասնակցություն,

21) բարձրագույն ուսումնական հաստատությունների (կազմակերպությունների) պետական նմուշի փաստաթղթերի հայտավորման և բաշխման աշխատանքների համակարգման մասնակցություն,

22) բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառում պետական պարգևների ներկայացման և գերատեսչական պարգևների շնորհման աշխատանքների համակարգման վերաբերյալ եզրակացությունների և առաջարկությունների ներկայացում,

23) գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի և գիտական կոչումներ շնորհելու կարգի մշակում,

24) ատենախոսությունների թեմաների հաստատման և ատենախոսության պաշտպանության համար անհրաժեշտ որակավորման քննությունների հանձնման կարգի սահմանում,

25) կրթական և գիտական աստիճանների պետական նմուշի ավարտական և գիտական կոչումներին վերաբերող փաստաթղթերի ձևերի մշակում,

26) նախարարության և նրա համակարգի բյուջետային գործընթացի ապահովման մասնակցություն,

27) բարձրագույն և հետբուհական կրթության համակարգի որակի և արդյունավետության մոնիտորինգի, այդ բնագավառներում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության իրականացման արդյունավետության գնահատման մասնակցություն.

28) ուսումնական հաստատության ղեկավարի (ռեկտոր, տնօրեն) առաջարկությամբ, քննարկում և նախարարի հաստատմանն է ներկայացնում բուհերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածությունները, ինչպես նաև՝ ամփոփում և վերլուծում է այդ հանձնաժողովների հաշվետվությունները քննությունների և դիպլոմային աշխատանքների (նախագծերի) արդյունքների վերաբերյալ,

29) ուսանողների կիսամյակային առաջադիմության վերաբերյալ բուհերից ստացված տվյալների, ինչպես նաև՝ տարեկան վիճակագրական ձևերի, ընդհանրացում և վերլուծում,

30) ուսումնական գործընթացի վերաբերյալ ֆիզիկական անձանց և կազմակերպությունների գրությունների քննարկում և պատասխանում,

31) Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված այլ լիազորությունների իրականացման մասնակցություն:

7. Վարչությունը նախապատրաստում և նախարարի, աշխատակազմի ղեկավարի ու համակարգող նախարարի տեղակալի քննարկմանն է ներկայացնում առաջարկություններ՝

1) պետական բուհերի և նրանց մասնաճյուղերի հետագա զարգացման և հանրապետության

տարածքում օպտիմալ տեղաբաշխման վերաբերյալ,

2) պետական բուհերում պահանջարկը կորցրած մասնագիտությունների փակման և նոր մասնագիտությունների բացման վերաբերյալ,

3) կրթության ուսուցման ձևերի ընտրության վերաբերյալ,

4) ուսումնամեթոդական կոնֆերանսների, խորհրդակցությունների և սեմինարների կազմակերպման վերաբերյալ,

5) ուսումնամեթոդական գործընթացը կատարելագործելու ուղղությամբ բուհերի, ֆակուլտետների, դեկանատների և ամբիոնների աշխատանքների վերաբերյալ,

6) բուհերի ընդունելության, ընթացիկ և ամփոփիչ ատեստավորման կազմակերպման մասին,

7) ուսումնական գործընթացում ուսուցման նոր ձևերի և մեթոդների, առաջավոր, այդ թվում՝ նաև արտասահմանյան փորձի, կիրառման մասին:

8. Վարչությունն իր լիազորությունների սահմաններում իրավասու է՝

1) պահանջել բուհերից սահմանված ձևի հաշվետվություններ, տեղեկագրեր և զեկուցագրեր նրանց ուսումնադաստիարակչական գործունեության վերաբերյալ, ինչպես նաև՝ տեղեկանքներ քաղաքացիների առաջարկությունների, դիմումների, նամակների և գանգատների քննարկման արդյունքների վերաբերյալ,

2) վարչության աշխատողների կամ վարչության կողմից կազմված և նախարարի կամ աշխատակազմի ղեկավարի հրամանով հաստատված հանձնաժողովների միջոցով ուսումնասիրել ուսումնամեթոդական աշխատանքների վիճակը բուհերում կամ նրանց առանձին ստորաբաժանումներում,

3) ներկա լինել դասախոսություններին, սեմինարներին, գործնական և լաբորատոր պարապմունքներին, ստուգարքներին, ընթացիկ և ամփոփիչ ատեստավորման, ընդունելության քննություններին և դիպլոմային աշխատանքների (նախագծերի) պաշտպանություններին: Մասնակցել պետական, հավատարմագրված ոչ պետական և չհավատարմագրված լիցենզավորված բուհերի խորհուրդների, ռեկտորատների, ֆակուլտետների խորհուրդների և ամբիոնների նիստերին:

## III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

9. Վարչությունը ղեկավարում է վարչության պետը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ կրթության և գիտության նախարարը՝ օրենքով սահմանված կարգով:

10. Վարչության պետը իր գործունեության ընթացքում առաջնորդվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով, նախարարության և սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

11. Վարչության պետը իրականացնում է վարչությանը վերապահված խնդիրները և գործառույթները և պատասխանատու է լիազորված բնագավառներում քաղաքականության մշակման ու իրականացման, տիրող իրավիճակի և հեռանկարային զարգացման ապահովման համար:

12. Վարչության պետը հաշվետու է նախարարին, աշխատակազմի ղեկավարին և համակարգող փոխնախարարին:

13. Վարչության պետը՝

1) կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է վարչության ընթացիկ գործունեությունը,

2) կատարում է Նախարարության կողմից վարվող քաղաքականության մասով՝ Նախարարի, իսկ քաղաքացիական ծառայության ղեկավարման և կազմակերպման մասով՝ Աշխատակազմի ղեկավարի հանձնարարականները,

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև Վարչության առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

14. Վարչության պետի տեղակալը՝

1) իր լիազորությունների սահմաններում կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է վարչության ընթացիկ գործունեությունը.

2) կատարում է վարչության պետի հանձնարարականները,

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև Վարչության առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար,

4) վարչության պետի տեղակալը անմիջականորեն ենթակա և հաշվետու է վարչության պետին,

5) վարչության պետի տեղակալն իրեն անմիջականորեն ենթակա աշխատողներ չունի:

15. Բաժնի պետը՝

1) կազմակերպում, ծրագրում, համակարգում, ղեկավարում և վերահսկում է բաժնի ընթացիկ գործունեությունը.

2) կատարում է վարչության պետի հանձնարարականները.

3) պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները, իրեն վերապահված լիազորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, կամ վերազանցելու, ինչպես նաև բաժնի առջև դրված խնդիրները և տրված հանձնարարականները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

4) բաժնի պետը անմիջականորեն ենթակա և հաշվետու է վարչության պետին:

## IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. Վարչության պետը և բաժնի պետերը, աշխատանքային կարգապահության պահպանման հետ կապված, պարտավոր են՝

1) աշխատողների համար ապահովել ՀՀ օրենսդրությամբ նրանց վերապահված իրավունքների և պարտականությունների ճշգրիտ ու ժամանակին կատարման, ինչպես նաև նրանց ներկայացվող սահմանափակումների պահպանման համար անհրաժեշտ երաշխիքներ.

2) աշխատողներին ծանոթացնել աշխատանքային պայմաններին, ճշտորեն ու պատշաճորեն կազմակերպել աշխատանքների կատարումը.

3) աշխատողներին ծանոթացնել աշխատակազմի գործավարության կարգին, ինչպես նաև՝ ապահովել դրանց կատարումը.

4) պաշտոնական (աշխատանքային) պարտականությունների կատարման և ծառայողական՝ լիազորությունների իրականացման համար աշխատողներին ապահովել անհրաժեշտ իրավական ակտերով,

17. 16-րդ կետի ենթակետերում նշված պարտականությունների հերթականությունը չի նշանակում դրանց առաջնահերթություն։

18. Աշխատանքային կարգապահության պահպանման հետ կապված՝ վարչության պետը և բաժնի պետերն ունեն նաև իրավական ակտերով, ինչպես նաև՝ ներքին կանոններով նախատեսված այլ պարտականություններ։

19. Վարչության աշխատողն աշխատանքային կարգապահության պահպանման մասով պարտավոր է՝

1) կատարել օրենքների, իր պաշտոնի անձնագրի, այլ իրավական ակտերի պահանջները, դրանցով սահմանված պաշտոնական (աշխատանքային) պարտականությունները, պահպանել դրանցով նախատեսված սահմանափակումները,

2) ժամանակին ու ճշգրիտ կատարել իր անմիջական ղեկավարի՝ սահմանված կարգով, իր լիազորությունների շրջանակներում տրված հանձնարարականները,

3) խնամքով վերաբերվել պաշտոնական (աշխատանքային) պարտականությունների և ծառայողական լիազորությունների, ինչպես նաև հանձնարարված աշխատանքների կատարման նպատակով հատկացված տեխնիկական, ֆինանսական և մյուս նյութական միջոցներին, ճիշտ և նպատակային օգտագործել դրանք,

4) աշխատանքի վայրում պահպանել անվտանգության տեխնիկայի, էլեկտրաէներգիայի օգտագործման, հակահրդեհային պաշտպանության կանոնների պահանջները,

5) աշխատանքի ժամերին գտնվել աշխատանքի վայրում կամ պաշտոնական (աշխատանքային) կամ ծառայողական անհրաժեշտությունից ելնելով մեկնած մյուս վայրերում և առանց ծառայողական անհրաժեշտության կամ անհարգելի պատճառներով չբացակայել,

6) աշխատասենյակում պահպանել կարգուկանոն և չաղմկել,

7) պաշտոնական (աշխատանքային) պարտականությունների կատարման և ծառայողական լիազորությունների իրականացման անհրաժեշտությունից ելնելով՝ գործուղման մեկնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

8) կատարել 19-րդ կետի ներքին կանոնների մյուս դրույթների պահանջները։

20. Սույն կետի ենթակետերում նշված պարտականությունների հերթականությունը չի նշանակում դրանց առաջնահերթություն։

21. Աշխատանքային կարգապահության պահպանման հետ կապված՝ վարչության աշխատողն ունի նաև իրավական ակտերով, ինչպես նաև ներքին կանոններով նախատեսված այլ պարտականություններ

22. Վարչության աշխատողներին, աշխատանքային կարգապահության պահպանման հետ կապված, արգելվում է՝

1) աշխատանքային ժամերին զբաղվել իրենց պաշտոնական (աշխատանքային) պարտականությունների և ծառայողական լիազորությունների հետ չկապված ցանկացած այլ աշխատանքով՝ բացառությամբ օրենքով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև սույն ներքին կանոններով սահմանված դեպքերի,

2) ոչ ծառայողական նպատակներով օգտագործել ծառայողական նպատակներով հատկացված տեխնիկական, ֆինանսական և մյուս նյութական միջոցները։